

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2021-5-6-Ա

ք. Երևան

25.05.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի մայիսի 25-ի նիստում քննարկեց 2021 թվականի մարտի 30-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ Բուրգեր Քինգ Քորփորեյշն ընկերության (5707 Blue Lagoon Drive, Miami, FL 33126, USA, US) բողոքը «ԲՈՒՐԳԵՐ ՔԻՆԳ» (No20160575) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված՝ 43-րդ դասի ծառայությունների համար հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան վերը նշված դասի ծառայությունների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 43-րդ դասի ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «BURGER KING» (Հասմիկ Գասպարյան, ք. Երևան Նորքի 9-րդ զանգված, 20 շենք, բն. 10 AM, N 10531, 31.05.2006) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 119-րդ կետի 1-ին ենթակետի, 122-րդ կետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն և չնայած առանձին

տարբերությունների, այն է՝ այբուբենի, որի տառերով գրված են բառերը, հնչում են գրեթե նույն ձևով:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «BURGER KING» (Հասմիկ Գասպարյան, ք. Երևան Նորքի 9-րդ զանգված, 20 շենք, բն. 10 AM, No10531, 31.05.2006) բառային ապրանքային նշանին:

Բողոքարկողը հրաժարվել էր մասնակցել բողոքարկման խորհրդի նիստին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ներկայացված առաջարկը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «ԲՈՒՐԳԵՐ ՔԻՆԳ» (No20160575) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ

ՎԱՐՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ